

189/141

A 223

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ II ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ

• ≠ 189 ≠

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մ Ա Ս Բ.

(Թե աՅս ՅեՎ Թե սրան նախորդող Ա. ՄԱՍԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԳՏԵԼ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՅԵՎ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ)

ԿԱԶՄԵՑ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բ. ՄԱՍ

ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կազմեց՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ. — ՅԵՐԵՎԱՆ, 1927

Ա. ԲԱՌԵՐԻ ՊԱՇՏՈՆԸ ԽՈՍՔԻ ՄԵԶ

Սրանք խոսքեր կամ նախադասություններ են:

Առանց բայի խոսք չի կարող լինել. բայը կարող է չդրվել, բայց մտքով հասկացվել. որ՝ հասկացողին՝ մին, չհասկացողին՝ հազար ու մին,—ուր չի դրված ասա բայը, բայց մտքով հասկացվում է, թե՛ հասկացողին մին ասա, չհասկացողին հազար ու մին ասա:

§ 63. Գնաց:—Վաչիկը գնաց:—Վաչիկը դպրոց գնաց:—
Վաչիկը յերեկ դպրոց գնաց:

Պատասխանեցէք հետեւյալ հարցերին:

1. Ո՞վ գնաց. 2. Ո՞ւր գնաց. 3. Յե՞րբ գնաց:

ՎՈՐՈՇՈՒՄ 64. Բացի ըսյից, խոսքի մեջ կարող են նյութինայեվ լրացումներ, վորոնք այս կամ այն տեսակե-



11-241909K

տից լրացնում են խոսքի իմաստը (Վաչիկը, յերեկ, դրպ-
րոց):

§ 64. Վաչիկը յեվ Սուրիկը միասին գնացին: Յես ու
դու մնացինք:— Յեվ, ու բառերը կապում են բառը բառի հետ:

ՎՈՐՈՇՈՒՄ 65. Բացի լրացումներից, խոսքի մեջ կա-
րող են լինել յեվ կապակցական բառեր (և, ու):

§ 65. Տո՛, Մի՛նաս, ո՛ւր. եյի՛ր այսքան ժամանակ:—
Վա՛յ, Սահա՛կ, շատ վատ բան է պատահել:— Տո՛, վա՛յ
ձաջնարկությունները խոսքից դուրս մնացող և զգացմունք
ցույց տվող բառեր են:

ՎՈՐՈՇՈՒՄ 66. Խոսքից դուրս, զգացմունք կամ կամ
ցույց տվող բառեր կարող են լինել, վորոնք, խոսքը կտրե-
լով, կարող են խոսքի մեջն ընկնել (տես § 62, կանոն
32, բ.):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 74. Արտագրեցե՛ք յեվ բառերի վե-
րելը նշանակեցե՛ք բառերի տեսակը խոսքերի մեջ՝ կարճ
ձեվով՝ բ=բայ, լ=լրացական բառ, կ=կապակցական բառ,
ձ=ձաջնարկություն:

Աշակերտները հավաքվեցին դպրոց: Վաչիկը և Հրանտը
բախում խաղում ելին: Զանգը տվին: Յերկուսը դեռ խա-
ղում ելին—Տո, Վաչիկ, զանգը տվել է:— Յերկուսը ընկեր-
ները հեռվով ու շնչասպառ վազեցին դասարան:

Բ. ԼՐԱՅՈՒՄՆԵՐ

ԼՐԱՅՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

§ 66. Աշակերտը գիրք է կարդում:—Նուշիկը մատիտով
նկարում է:— Աշակերտը, գիրք, նուշիկը, մատիտով գո-
յականները (տես գլուխ V Ա) խոսքի մեջ բայի գոյական
լրացումներ են:

§ 67. Աշտը արագ գնաց տուն:— Միքայելը հիմա
կգա:— Սուրիկն արդեն յեկել է:— Արագ, հիմա, արդեն

մակբայները (տես գլուխ V Ե) խոսքի մեջ բայի մակբա-
յական կամ պարագայական լրացումներ են:

§ 68. Կարմիր ու կապույտ մատիտներ գնեցի:—Յես
պատկերազարդ գիրք ունիմ:— Կարմիր, կապույտ, պատ-
կերազարդ ածականները (տես գլուխ V Գ) խոսքի մեջ
լրացումների ածական լրացումներ են (լրացման լրացում-
ներ):

ա) Բայի գոյական լրացումներ. անցողական յեվ
անանցողական բայեր

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 75. Ստորեվ բերած խոսքերի մեջ
գտեք, թե ո՞վ կամ ի՞նչն է մի բան անում կամ լինում, հե-
տևյալ ձևով. որ.՝ Աշակերտը կարդում է— ո՞վ է կարդում:—
Այստեղ մի բաժակ կա—ի՞նչ կա:

Գյուղացին արտում բահը ձեռքին աշխատում է— ո՞վ
է աշխատում:— Յերեկ Տիգրանը դպրոցի բախում բռնեց Հու-
սիկին:— Ահա ծագեց պայծառ արևը:— Մենք յեկանք տուն:

Ինքներդ խոսքեր կադմեցեք և ցույց տվեք անող կամ
յեղող առարկան:

ՎՈՐՈՇՈՒՄ 67. Անող կամ յեղող առարկայի անունը
խոսքի մեջ կրչվում է յենթակա:

§ 69. Աշակերտը կարդում է: Աշակերտները կարդում
են: Յես կարդում եմ, մենք կարդում ենք, դու կարդում ես:

ՎՈՐՈՇՈՒՄ 68. Բայը յեվ յենթական համաձայնում
են թվով ու դեմքով. յեզակի յենթակայի հետ դրվում է
յեզակի բայ, հոգնակի յենթակայի հետ՝ հոգնակի բայ:

§ 70. Արտաշեսն ու Գրիգորը գնացին:— Թիֆլիսը,
Բագուն, Բաթումը, Յերևանը Անդրկովկասի քաղաք-
ներն են:

ՎՈՐՈՇՈՒՄ 69. Յեթե նույն նախադասություն մեջ
մեկից ավելի յեզակի յենթականներ կան, բայը հոգնակի յե
դրվում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 76. Ստորեւ ընրած խոսքերում ցոյց տվեք բայերը յեւ յենթակաները յեւ բացատրեցե՛ք նրանց համաձայնութեան շեղումներն ընդհանուր կանոնից:

Հինգ աշակերտ գնացին, տասն աշակերտ մնացին:— Կարգ ու կանոնը վերացել է:— Լացն ու կոծը չի կտրվում:

Յո'ւց տվեք յենթակա լրացումները.

Ամէնի ձայնով յերկաթն է խոսում,
պողպատն է ճշում շաշտունով դողդաջ—
և բազմադաղակ որերի լեզուն
հնչում է այստեղ, վորպէս մարտակոչ:
Այս աղմկահոլով կյանքի խենթ բոցում
այրում է սիրտս սրբազան մի դող,
հուզում է հոգիս մի վեհ հիացում,
և սարսափելին թվում է դուրթող...

(Կարմիր Արև, «ՎԵՐԱԴԱՐՁ»)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 77. Հետեւյալ խոսքերի մեջ լրացումներ դրեք, վորոնք պատասխանեն ինչ կամ ումը հարցերին.

Սեդիկը կտրեց... (ի՞նչը):— Հյուսնը կտրեց... Արշակն սպանեց... (ո՞ւմ):— Արտուշը վիրավորեց... Հայկը կերավ...

Այդ լրացումները ցույց են տալիս, թե բայի գործողութիւնը յենթակայից ինչի կամ ում վրա չէ անցնում, կամ բայի գործողութիւնը յենթակայից ի՞նչը կամ ում վրա է կրում իր վրա:

ՎՈՐՈՇՈՒՄ 78. Այն լրացումները, վորոնք ցույց են տալիս, թե բայի գործողութիւնը յենթակայից ի՞նչը կամ ում վրա է կրում, կոչվում են կրող լրացումներ:

Յո'ւց տվեք կրող լրացումները յեւ յենթակաները.

Մի լար, վորդիս, վոր չես լսում
եւ մայրական քաղցր որոր.
յես մեծ կովի յերգ եմ հյուսում
որոցքիդ մոտ ամեն որ...

Դու լսում ես այնտեղ, դուստմ
շահ ու շառահ, լաց ու կոծ.—
մեր արյունն է այնտեղ հոսում,
ներկած է՝ տուն, է՝ փողոց...

(Կարմիր Արև, «ԲԱՆՎՈՐՈՒՀՈՒ ՈՐՈՐԸ»)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 78. Հետեւյալ խոսքերի բայերը կարո՞ղ են կրող լրացում ունենալ.

Արշակը ուրախ է:— Գրիգորը քնում է:— Սերոբը մեծանում է:

ՎՈՐՈՇՈՒՄ 71. Բոլոր բայերը կրող լրացում չեն կարող ունենալ:

Այն բայերը, վորոնք կրող լրացում ունին կամ կարող են ունենալ, կոչվում են անցողական բայեր (կոտորել, ջարդել, սպանել):

Անցողական բայերը ցույց են տալիս այնպիսի գործողութիւն, վոր յենթակայից անցնում է ուրիշ առարկայի վրա:

Այն բայերը վորոնք կրող լրացում չունին յեւ չեն կարող ունենալ, կոչվում են անանցողական բայեր (լինել, քնել, հանգստանալ, նստել):

Անանցողական բայերը ցույց են տալիս այնպիսի գործողութիւն, վոր յենթակայից չի անցնում ուրիշ առարկայի վրա:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 79. Ներքեւ ընրած խոսքերում ցոյց տվեք անցողական յեւ անանցողական բայերը, նրանց յենթակաները յեւ կրող լրացումները, յեթե կան:

1. Բանվորները սոցցով ծառը կտրեցին:— Սիրաքը պատռեց իր դիրքը:— Աշակերտները վազվզում են դպրոցի բակում:— Զուրը հոսում է անուշ խոխոշելով:— Տիգրանը կարգացնում է Սիրուշին:— Հայկուշը պատրաստեց իր դասը:— Նուշիկը պարտեզում վարդ է քաղում:— Յես աթուր մոտեցրի սեղանին:

2. Ատում ենք թագը բռնակալների,
պաշտում ենք շղթան տառապողների,
մեր արյամբ թրջված գահերը բոլոր
պիտաներկենք արյամբ մեր վոսոխների,
(Կ. Ա.)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 80. Լրացրե՛ք հետեվյալ խոսքերը՝
ներքեվ ըերած որինակի ձեզով.

Յես թե կարդում եմ և թե կարդացնում:

Յես թե գրում եմ և թե գրել եմ տալիս:

Յես թե ուրախանում եմ և թե... Թե չերգում եմ և
թե... Թե նկարում եմ և թե... Թե հանգստանում եմ և
թե... Մեծանում եմ և... Կտրում եմ և... Ուտում եմ և...
Փախչում եմ և... Կորչում եմ և... Իմանում եմ և... Հի-
շում եմ և... Ասում եմ և...

Կարդացնում եմ, ուտեցնում եմ, հագցնում եմ... Բա-
յերը, վորոնք ունեն ացն, եցն, ցն միջածանցներ (վար-
ժություն 60, 2) կոչվում են պատճառական սեռի բայեր:

ՎՈՐՈՇՈՒՄ 72. Պատճառական սեռի կոչվում են
այն անցողական բայերը, վորոնք ցույց են տալիս, թե
յենթական ինքը չի կատարում՝ գործողությունը, այլ պատ-
ճառ ե լինում, վոր մի ուրիշը կատարի ըստի ցույց տված
գործողությունը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 81. Ներքեվ դրած խոսքերը փոխե-
ցեք ստորեվ ցույց տված ձեզով.

Յես ծեծեցի Մարկոսին—Մարկոսը ծեծվեց ինձնից:

Գրիգորը հաղթեց Մուկուչին—Մուկուչը հաղթվեց
Գրիգորից:

Միլիցիան բռնեց ավագաններին...

Հրդեհն ալրեց շենքը...

Կարկուտը վրասեց ցանքսերը...

Փոթորիկը կտորեց ծառերը...

Սեթն սպանեց գողին...

Գնդակը ծակեց տախտակը...

Քարը կտորեց բաժակը...

Այս որինակների մեջ առաջին շարքում գտնվող խոս-
քերի մեջ չեղած անցողական բայերը ներգործական սեռի
բայեր են, իսկ չերկրորդ շարքում գտնվող խոսքերի մեջ
չեղած բայերը (վ միջածանցով)— կրավորական սեռի:

ՎՈՐՈՇՈՒՄ 72. Ներգործական սեռի բայերը ցույց
են տալիս այնպիսի գործողություն, վոր յենթական ինքն ե
կատարում, իսկ կրող առարկան այդ գործողությունը յեն-
թակայից կրում ե իր վրա:

Կրավորական սեռի բայերը, վորոնք ունին վ միջա-
ծանց (Չարգվել, սպանվել), ցույց են տալիս այնպիսի
գործողություն, վոր յենթական մի գոյական լրացումից կրում
ե իր վրա:

Ներգործական յեվ կր սվորական բայերն իմաստով իրար
հակառակ են, յեվ մեկով արտահայտված խոսքը կարելի
յե փոխել մյուսով, համապատասխան կերպով փոփոխելով
բառերը:

Այն բայերը, վորոնք անցողական չեն (վոչ ներգոր-
ծական են և վոչ ել պատճառական), այլև կրավորական
չեն, կոչվում են չեզոք սեռի բայեր (գնում եմ, ուրախա-
նում եմ, նստեցի, կա, ննջիր):

Չեզոք սեռի բայերը ցույց են տալիս այնպիսի գոր-
ծողություն, վոր վոչ յենթակայից ե անցնում կրող լրացումի
վրա յեվ վոչ ել յենթական ե կրում մի ուրիշ լրացումից,
այլ յենթական ինքն իրեն լինում ե մի վիճակի մեջ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 82. Վորոշեցե՛ք ըստ յենթական
վյալ խոսքերի մեջ:

Ծառը կտրվեց:— Ծառը կտրեցին:— Ծառը կտրել
տվին:— Յես կարդացի:— Յես կարդալ տվի:— Գիրքը
կարդացվեց:— Մենք հիանում ենք:— Մենք հիացնում
ենք:— Մայրն արթնացավ և արթնացրեց յերեխային:—
Յերեխան արթնացավ:

Ամփոփում.— Կրող լրացման նկատմամբ բայերը բա-
ժանվում են յերկու խմբի—անցողական յեվ անանցողա-

կան. Անցողական բայերը յերկու սեռ ունեն՝ 1) Երգոր-
ծական. 2. պատճառական: Անանցողական բայերը նույն-
պես յերկու սեռ ունեն՝ 1. կրավորական. 2. չեզոք:

Յո՛ւյց տվեք բայերի սեռը:

Յեկա, վոր այստեղ ձեզ համար այսոր
հրեղեն խոսքեր կուեմ և խնդում,
յսեմ հաղթական մարտի ցնծություն,
Տեսնեմ շարքերը ձեր հզորագոր:

Յեվ լուսաբացին, յերբ հոգնած լինեմ,
յերբ քնած լինեմ՝ թշնամուց խաբված,
արևածագի ցնծությամբ արբած,
կանչեմ ձեզ, ճշամ՝ յեղբայրներ, յերեք...

(Կարմիր Արև, «ՎԵՐԱԴԱՐՁ»)

բ. Բայի պարագայական լրացումներ

§ 71. Աշակերտները դպրոցից գնում ելին իրենց
տները: Նրանք անցնում ելին չերկար փողոցով: Փողոցում
կառքեր ելին կանգնած: Շենքերից մեկի կտրին դուռակ
եր ծածանվում:

Այս խոսքերում ընդգծված լրացումները ցույց են տա-
լիս այս կամ այն բայի գործողության տեղի պարագան:
Տեղի պարագաները պատասխանում են՝ վորտեղից, ո՞ւր,
վորտեղ հարցերին:

§ 72. Այդ բանը կատարվեց զարնանը: Մայիսին եր:
Այդ ժամանակ վարդերը բուրում ելին: Այժմ մանրամասն
հիշում եմ բոլորը: Արդեն միջանի տարի չե անցել այդ
որվանից:

Այս խոսքերում ընդգծված լրացումները ցույց են տա-
լիս այս կամ այն բայի գործողության ժամանակի պա-
րագան: Ժամանակի պարագան պատասխանում է յերբ,
յերբվանից, մինչև յերբ հարցերին:

§ 73. Մեր կոլլեկտիվը յեռանդով աշխատում եր: Բո-
լորը սիրով գործի ելին կպել: Շտապ չեյինք աշխատում:
Արեւ պայծառ փայլում եր: Մենք ուրախ չերգում ելինք:

Այս խոսքերում ընդգծված լրացումները ցույց են տա-
լիս այս կամ այն բայի գործողության ձևի կամ վորակի
պարագան, վոր պատասխանում է՝ ի՞նչպես, ի՞նչ կերպով
հարցերին:

§ 74. Մենք յերեք կիլոմետր գնացել ելինք արդեն:
Յուրաքանչյուրիս բեռը հինգ կիլոգրամ եր կշռում: Յես
ճանապարհին միջանի անգամ բեռս վայր դրի՝ հանգստա-
նալու համար: Հետզհետե հոգնածությունս ավելի սաստ-
կանում եր:

Այս խոսքերում ընդգծված լրացումները ցույց են
տալիս այս կամ այն բայի գործողության չափ ու քանա-
կի պարագան, վոր պատասխանում է՝ վորքան, ի՞նչքան,
քանի՞ անգամ հարցերին:

§ 75. Ձմեռը Գուրգենը մրսելուց հիվանդացավ: Հի-
վանդության պատճառով բացակայում եր դասից: Ամեն օր
դեղեր եր ընդունում՝ բժշկվելու համար: Այսպես անելով
միայն կարող եր առողջանալ: Հիվանդ լինելով հանդերձ՝
ուզում եր կարդալ: Մայրն արգելում եր: Թերեկս վոր-
դու հիվանդությունը ավելի սաստկանար:

Այս խոսքերում ընդգծված լրացումները ցույց են
տալիս այս կամ այն բայի գործողության նիմուսնի պա-
րագան, այսինքն՝ գործողության պատճառի, նպատակի,
պայմանի, հակառակ հիմունքի յեվ յեղանակի (խոսողի վե-
րաբերմունքի) պարագաները:

գ. Լրացման լրացումներ

§ 76. Ընդարձակ բակում աշակերտները խաղում ելին:
Պայծառ արեն աշխույժ եր ներշնչում նրանց: Ուրախ ու
զվարճալի խաղն զբաղեցրել եր ամենքին:

Այս խոսքերում ընդգծված բառերը բայերի լրացումներ չեն, այլ լրացումների լրացումներ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 73. Յո՛ւյց տվեք, թե ընդգծված բառերից վո՛րը բայի վո՛ր լրացման լրացումն է:—Ի՞նչ տեսակի բառեր են այդ լրացումները:

§ 77. Աշոտի մարյրը հիվանդ էր: Հարեմանի վորդին բժիշկ հրավիրեց: Բժշկի դեղատոմսը առժողկոմատի դեղատուն տարավ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 74. Ի՞նչ տեսակի բառեր են վերեւ բերած խոսքերում ընդգծված լրացման լրացումները: Ինքներդ խոսքեր կազմեցե՛ք, վորոնց մեջ լրացման լրացում լինին՝

1. Յուցական դերանուններ. (Մ բ)
2. Հարցական դերանուններ. (Մ բ)
3. Ստացական դերանուններ (Մ բ)
4. Անորոշ դերանուններ (Մ բ)
5. Հարաբերական դերանուններ (Մ բ)
6. Վորակական ածականներ (Մ գ)
7. Քանակական ածականներ (Մ գ)
8. Դասական ածականներ (Մ գ)
9. Յուցական ածականներ (Մ գ)
10. Հարցական ածականներ (Մ գ)
11. Անորոշ ածականներ (Մ գ)
12. Բայածականներ կամ դերբայներ (§ 55, վորոշում 58, գ, դ, ե):

§ 78. Աշոտը, Միհրանը, Վարդանը, Սիրուշն ու Շողիկը աշխուրհիկ անգամներ ընտրվեցին:—Առաջին, չերկրորդ և չերրորդ կամբերն եքսկուրսիա գնացին:—Պետրատի գրախանութից գնեցի՝ թուղթ, տետրակ, մատիւ, դրիչ ու թանաք:

ԿԱՆՈՆ 33. Խոսքի մեջ հարանման իմաստով լրացումները կամ լրացման լրացումներն իրարից բաժանվում են ստորակետերով. վերջին յերկուսը, յեթե միանում են ու կամ յեւ շաղկապով, ստորակետով չեն բաժանվում:

Գ. ՀՈՒՆՈՎՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԽՈՍՔԻ ՄԵՋ

1. Հարցեր տալով՝ դիտեցե՛ք բուն ուղղական հոլովի կիրառումը հետեւյալ խոսքերի մեջ յեւ յեզրակացրե՛ք՝ ի՞նչ ե ցույց տալիս ուղղական հոլովը.

1. Պողոսը յեկավ (սիւ յեկավ):—Ձմեռն անցավ (ի՞նչն անցավ):—Սեդանի վրա գիրք կա:

2. Սահակն աշակերտ է:—Խնձորենին ծառ է:—Ձուրը գրորդի կդառնա:

3. Արեւը մանելուց հետո գնացինք:—Սիրտն ուրախ, գլուխը տաք մարդ է նա:

4. Սիմոնը քար սիրտ ունի:—Նա աղվես մարդ է:

Փոխեցե՛ք հետեւյալ արտահայտութիւնները ցույց տված ձեւով.

- | | |
|---------------------------------------|-----------------------------|
| 1. Խելքը պակաս մարդ — պակասամիտ մարդ. | |
| 2. Գլուխը տաք — տաքագլուխ. | |
| 3. Վոտքը կաղ — կաղոտն. | |
| 4. Գլուխը հաստ — . . . | |
| 5. Գլուխը պինդ — . . . | 10. Սիրտը սև — . . . |
| 6. Կաշին հաստ — . . . | 11. Կողքը հաստ — . . . |
| 7. Սիրտը մեծ — . . . | 12. Տունը քանդված — . . . |
| 8. Գլուխը բաց — . . . | 13. Սիրտը մեռած — . . . |
| 9. Ձեռքը դատարկ — . . . | 14. Ճլուղերը կոտրած — . . . |

2. Դիտեցե՛ք ուղղական հոլովի այն տեսակը, վոր պատասխանում է ո՞ւր, վորտեղ, մինչեւ յե՞րբ, վորքան ժամանակ, ինչքա՞ն, վորքան հարցերին:

Ծանոթութ յուն. — Քերականներից վոմանք այս տեսակի ուղղական հարցական հոլով են կոչում:

1. Աշակերտը գնաց դպրոց:—Քարն ընկավ գետին:—Գնացի աղօրորը: Դրեց գլպանը:—Ձեռքը տարավ բերանը:—Գլխարկը դրեց գլուխը:—Նա Թիֆլիս ե տպրում:

2. Նա ամբողջ որն աշխատում է: Յերկու ժամ անձրև յեկավ:—Յերեսուն տարի ապրեց:

3. Այդ յերկու ուղիքի արժեք:—Բեռը հինգ փութ կըշ-
ռեց:—Նա մի վերստ գնաց:

4. «Խուժանները» գողութիւնն գնացին:—Յես հարսա-
նիք չգնացի:—Զորքը կռիվ գնաց:

3. Դիտեցեք ուղղական հոլովի հետեյալ տեսակը, վոր
ցույց ե տալիս ա՛յն առարկան, վորին դիմում ենք մի բան
ասելու կամ հարցնելու համար:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն.—Քերականներից վոմանք այս տե-
սակի ուղղականը կոչական հոլով են անվանում:

ա. 1. Աշոտ, յերբեք չի մոռանա քեզ քո ընկերը:

2. Քո ընկերը, Աշոտ, յերբեք չի մոռանա քեզ:

3. Յերբեք չի մոռանա քեզ քո ընկերը, Աշոտ:

4. Այ մարդ, ո՛ւր գնացիր:—Տո, Արշակ, ինչո՞ւ չեկար:

5. Սիրելի՛ վորդիս, լավ աշխատիր:

բ. Մնաք բարով, արե՛վ, գարուն

և խնկաբո՛ւյր ծաղիկներ,

կարկաչահոս վտա՛կ սիրուն,

կանաչազգեստ բլուրներ.

Մնաք բարով, համբույր և սեր,

դեմքով հրեշտակ կո՛ւյս չքնաղ,

վայելչութ՛յան պայծառ ժամեր,

բաղցր ծախտ, կյա՛նք մատաղ...

(Բանաստ. Հովհ. Հովհ.)

ԿԱՆՈՆ 34. Կոչական բառը խոսքից բաժանվում ե
ստորակետով, յեթե սկիզբը կամ վերջն ե ընկնում. իսկ
յեթե խոսքի մեջտեղն ե ընկնում, յերկու կողմից առնը-
վում ե ստորակետերի մեջ: Կոչականի շեշտված վանկի
վրա շեշտ ե դրվում: Յեթե կոչականի վրա ածական կամ
ձայնարկութ՛յուն ե դրվում, շեշտն անցնում ե վերջիններիս:
ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 83. Խոսքեր կազմեցե՛ք, վորոնց միջ
ուղղականը ցույց տա.

1. Յենթակա (մի բան անող կամ լինող).—Կողմնակի
յենթակա:

2. Առարկայի վորակը կամ հատկանիշը:

3. Գործողութ՛յան ժամանակը (ժամանակի հայցական):

4. Գործողութ՛յան տեղը (տեղի հայցական):

5. Գործողութ՛յան չափ ու քանակը (չափ ու քանա-
կի հայցական):

6. Գործողութ՛յան նպատակը (նպատակի հայցական):

7. Առարկան, վորին դիմում ենք (կոչական):

4. Համապատասխան հարցեր տալով, դիտեցե՛ք տրա-
կան հոլովի ա՛յն տեսակը, վոր դրվում ե մի գոյականի
վրա՝ իբրեւ նրա լրացում:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն.—Քերականներից վոմանք այս տե-
սակի տրականը սեռական հոլով են կոչում:

1. Ամասիկի (ո՛ւմ) գիրքը կորավ:—Սեղանի (ինչի՞)
վորը կորավեց:

2. Վարդանի տեսածն այդ ե:—Ագուսի կոռալն ա-
խորժելի չե:

3. Բանվորների ազատարարը նա չե:—Հիվանդի խնամ-
քը ծանր ե:

4. Շաքարի կիւրն ութսուն կոպեկ ե:—Յորենի փութը
յերկու ուղբի չե:

5. Խոտի դեղը բարձր ե:—Յորենի հացը զարու հա-
ցից լավ ե:

6. Դիւի մազերը, մատի մատանին, մեջքի գոտին,
գլուղի բնակիչները, կարասի գինին:

7. Այտրվա դասը, ամառվա միւրգը, նոր տարվա
ցուրտը, մայիսի վարդը:

8. Մի ուղբու չիթ, քսան կոպեկի խաղող:

9. Առաջին աստիճանի դպրոց, լավ խնքի մարդ, նոր
ծեփի հագուստ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 84. Խոսքեր կազմեցե՛ք, վորոնց մեջ
այս տեսակի տրականը (սեռականը) ցույց տա՝

1. Պատկանելութ՛յուն, առարկա, վոր տեր ե մի ուրիշ
առարկայի (ստացական սեռական).

2. Ամբողջը, վորի մասն ե վերցվում (մասնական սե-
ռական).

3. Նյութը, վորից կազմված է առարկան (նյութի սեռական).

4. Տեղը, ուր կա կամ լինում է մի բան (տեղի սեռական).

5. Ժամանակը, ուր կա կամ լինում է մի բան (ժամանակի սեռական).

6. Դիմը կամ արժեքը (զնի կամ արժեքի սեռական).

7. Վորակը կամ տեսակը (վորակական սեռական).

5. Դիտեցե՛ք ուղղական և սրական հոլովների այն տեսակները, վորոնք կրող լրացում են լինում՝ դրվելով անցողական բայերի մոտ:

Ծանոթութուն.— Այս տեսակի ուղղականը և սրականը քերականներից վոժանք հայցական հոլով են անվանում:

1. Յես մի մարդ տեսա: Մարդ մարդու ցեխը չի գցի:— Յես այն մարդուն տեսա:

2. Այնտեղ մի մարդ սպանեցին:— Այնտեղ այն մարդուն սպանեցին:

3. Նա ընկեր է փնտռում:— Նա կորցրեց իր ընկերոջ:

4. Նա հայր ու մայր չունի:— Նա կորցրել է իր հորն ու մորը:

5. Այսոր շատ շուն ծեծեցի:— Նա շանը ծեծեց:

6. Մի կով մորթեցին, մի յեզ:— Մեր կովն ու յեզը մորթեցին:

7. Նա ծիուն շատ է ծեծում:— Մեր ծին գողացան:

8. Դու հավ մորթեցիր:— Դու հավը մորթեցիր:

9. Բանվորը փայտ է կոտորում:— Բանվորը փայտը կոտորեց:

10. Արամին սպանեց:— Գրիգորին բռնեց: Մանուշին թակեց:

11. Մարդ բռնել, մարդուն բռնել.— յերեխա ծեծել, յերեխայի ծեծել, յերեխային ծեծել.— ընկեր սիրել, ընկերոջ սիրել, ընկերին սիրել.— մարդ լացացնել, մարդու

լացացնել, մարդուն լացացնել, սարերին ու քարերին լացացնել, սարեր ու քարեր լացացնել.— Հայր, մայր, քույր, յեղբայր ճանաչել.— հորը, մորը, քրոջն ու յեղբորը ճանաչել.— Նա աղջիկ ունի.— նա աղջկան նշանեց.— Ամեն մի դպրոց իր վարիչը, իր գործավարը և տեխնիկական սշխատավորն ունի.— Բժիշկ հրավիրել.— բժշկին հրավիրել.— Զի թամբել.— ձին թամբել:

ՀԱՐՑՆԵՐ.— 1. Պարզեցե՛ք այդ որինականներից— կրող լրացումը յ՞ճրք է ուղղականի ձևով հայցական դրվում և յ՞ճրք՝ տրականի ձևով հայցական:

2. Կարելի՞ յե ասել—

1. Կովին մորթել, հավին մորթել, ձիուն սպանել, կատվին սպանել:

2. Եշին ցեխից հանել.— Գայլը վոչխարին կուտի: Կովին քշել:

3. Արամն սպանեց Սահակը:— Վաչիկը բռնեց Սիրուշը:

4. Դուանը ծեծել.— ապակին ծեծել.— մեկի կարիքին բավարարել:

Յեթն սխալ են, ապա ասացե՛ք ուղիղ ձեվերը:

6. Դիտեցե՛ք բուն սրական հոլովի կիրառումը ստորև բերված խոսքերի և որինականների մեջ:

1. Այս նամակը տուր Հայկին:— Այս գիրքը նվիրիր Սիրուշին:— Մենք պատահեցինք աշակերտներին:— Մենք մասնակցեցինք աշխատանքին: Դու ցրտի սովոր ես:— Խղճացե՛ք նրան:— Նա յեղբորը դաս է տալիս: Հեռվից սեվին ու սպիտակին է տալիս, կարժրին է տալիս:— Գլուխը տվեց պատին:

2. Կուշար քաղցածին մանր կրքրդի:— Վոտքին տեղ արավ, գլխին էլ ուղեց:

3. Նա գիրքը մեկ ոտքով ձեռնեց:— Նա մեկին հինգ է աշխատում:



4. Զանգի ձայնին աշակերտները դուրս թափվեցին, — Մեկի խոսքին խաբվեց:

5. Մենք հավաքվեցինք ժողովի: — Դու գնացիր ջրի, — Նա գնաց քնելու:

6. Նրա գլխին գլխարկ չկա: — Մատին մատանի չկա: — Մեջքին, ձեռքին, ճակատին: — Դու շատ ես ապրել նրա տանը: — Նա նստել է բարձր ըլրին, սարին, քարին, կտրին, ծառին, յեզերքին...

7. Զանապարհորդը տեղ հասավ կեսորին: — Դու գարնանն ես չեկել: — Փետրվարին ձյուն չեկավ: — Նա ծնվել է 1905 թվին: — Այս շոգին ուր ես գնում: — Նրա հարսանիքին, ծննդին, տոնին, թաղմանը...

8. Դու ել նրա որին ես: — Մի խելքի մարդ եք: — Յես քո կարծիքին չեմ: — Քո պատկերին, կերպարանքին, ընդունակության, շնորհքին...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 85. Խոսքեր կազմեցեք, վորոնց մեջ տրականը ցույց տա՝

1. Այն առարկան, վորին մի բան տրվում է.

2. Դին կամ արժեք.

3. Պատճառ.

4. Նպատակ.

5. Տեղ.

6. Ժամանակ.

7. Ձև կամ կերպ.

7. Դիտեցեք բացառական հոլովի կիրառումը հետեվյալ որինականներում.

1. ճանապարհորդը դուրս չեկավ զուղից: — Նա չեկավ այգուց, քաղաքից, սարից... Բռնեց նրա գլխից, մազերից, ձեռքից... Կապեց ծառից, սյունից...

2. Անցյալ տարվանից այստեղ եմ: — Մի ամսից կգամ: — Առավոտից իրիկուն, գյուղից քաղաք...

3. Մեկի աչքից ընկնել, խելքից հանել, հալից ընկնել...

4. Լավ-լավ բաներից խոսել ու պատմել: — Դեսից-դենից խոսել: — Աշխարհից անտեղյակ, ցավից գանգատվել:

5. Խելքից պակաս մարդ: — Ղրսից՝ քահանա, ներսից՝ սատանա: — հայերենից թույլ: ուժերից վեր:

6. Նա խելքներից խելոք է: — Նա բոլորից լավ է:

7. Սովից մեռավ: — վշտից մաշվեց: — ձայնից ճանաչեց: համից, հոտից, գույնից իմացավ:

8. Դուք հաղթվեցիք մեզնից: — Ծառը կտորվեց բամից:

9. Այս հացից մի կլիտ տուր, այս գինուց՝ յերկու շիշ: — մեզնից յերկուսը գնացին, ձեռքից՝ չորսը:

10. Այս մեկը վոսկուց է, այն մեկը՝ յերկաթից: — Իայտից պատրաստիր:

11. Նա հրաժարվեց սլաշտոնից: — այս եմ պահանջում նրանից:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 86. Կազմեցեք խոսքեր, վորոնք մեջ բացառականը ցույց տա՝

1. Տեղ.

2. Ժամանակ.

3. Նյութ.

4. Առարկան, վորից գործողությունն անցնում է յենթակայի վրա.

5. Պատճառ.

6. Համեմատություն կամ բաղդատություն.

7. Առարկան, վորի մասին պատմում են:

8. Դիտեցեք գործիական հոլովի կիրառումը ստորև բերած որինականներում.

1. Սղոցով կտրեցի, ուրազով տաչեցի: — Մատիտով պրեցի, ռետինով ջնջեցի:

2. Մենք անցանք բլրի ստորոտով, բարձրացանք լանջով: — Չուրը հոսում է առվով: — Յերկնքով ամպեր են անցնում: Քո գլխով շատ բաներ անցան:

3. Դուք գիշերով աշխատում եք: — Որը ցերեկով ծեծեց նրան: — Յերկու ժամով բացակայեց:

4. Նա շնորհքով տղա չեւ:—Համով, հոտով կերակուր:—
կաթնով փոշխար:—Ուժով մարդ:—Սրտով տղա:—Շեկ մա-
զերով, ծով աչքերով:—

5. Այդ գլուղը հինգ վերստով հեռու չեւ:

6. Նա ծագումով գլուղացի չեւ:—Հեզվով ճարտար եւ:—
վոտքով կաղ եւ:

7. Շաքարի կիւրն ութսուն կուպեկով գնեցի:—Սեն-
յակն ամսական վեց ուղբով վարձեցի:

8. Մարդիկ իրարով անցան:—Մտքովս անցավ:—Վզովը
փաթաթվել:

9. Գետինը ծածկվեց ձյունով:—Գետը ծածկվեց սա-
ռուցով:

10. Դու նրա խոսքով արիւր:—Նրա սրտով չեղավ:—
Բանն որենքով կանեն:

11. Մենք նստով ել գնացինք զբոսանքի:—Դուք չոր-
սով ել բացակա ելիք:—Յերեք հոգով գնացինք:—Ամբողջ
խմբով, ամբողջ ընտանիքով, բոլոր ընկերներով...

12. Մենք մտով կերակուր ունենք:—Դուք ընծով
քաշովի կերաք:—Յուղով փլավ, ձեթով փլավ, նավթով
ճրագ, տախտակով տուն...

13. Մենք նրա հրավերով յեկանք:—Վերջին տեղե-
կություններով նա հիվանդ եւ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 87. Կազմեցեք խոսքեր, վորոնց մեջ
գործիականը ցույց տա՝

1. Գործիք, վորով մի բան անում են.

2. Տեղ.

3. Ժամանակ.

4. Վորակ.

5. Քանակ.

6. Դին և արժեք.

7. Միասնություն, միասին մի բան անելը.

8. Նյութ, վորից կազմված եւ մի առարկա՝

9. Հիմունք.

9. Դիտեցեք ներգոյական հոլովի կիրառումը ստորե-
րեքած որինականերում:

1. Մենք պարապում ենք դպրոցում:— Սենյակում
աշխատում եմ:—Նրա գլխում խելք չկա, աչքում լույս չկա:
Դաշտում բուսած ծաղիկ:—Քաղաքում ու գլուղում, Ամե-
րիկայում... ներքեում, վերեւում...

2. Հինգ ժամում տեղ հասանք:— Մի տարում կվեր-
ջացնեմ:

3. Այդ չեղել եւ անցյալ դարերում:— Մեր օրերում
չեղավ:

4. Այս ըսնում դու հանցավոր ես:— Նկարելում լավ
ես:— Ուտելում, խմելում, չերգելում, աշխատելում...
(Նկարելու մեջ, չերգելու մեջ...):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 88. Կազմեցեք խոսքեր, վորոնց մեջ
ներգոյականը ցույց տա՝

1. Տեղ. 2. Ժամանակ:

Դ. ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Դիտեցե՛ք ըստերի դասավորությունը խոսքի մեջ յեւ
որենքներ հանեցե՛ք:

1. Յերեկ առավոտյան մեր պարտիզում Գրիգորենց
Արամը մեր բարձր խնձորենու ճյուղը կոտրել եւ (սովո-
րական շարադասություն):

2. Յերեկ առավոտյան եւ մեր պարտիզում Գրիգորենց
Արամը մեր բարձր խնձորենու ճյուղը կոտրել (և վոչ թե,
որինակ, չերեկոյան):

3. Մեր պարտիզում եւ Գրիգորենց Արամը չերեկ ա-
ռավոտյան մեր բարձր խնձորենու ճյուղը կոտրել (և վոչ
թե, որինակ, ձեր պարտիզում):

4. Գրիգորենց Արամն եւ չերեկ առավոտյան մեր պար-
տիզում մեր բարձր խնձորենու ճյուղը կոտրել (և վոչ թե,
որինակ, Մկրտիչը):

5. Մեր բարձր խնձորենու ճյուղն է յերեկ առավոտյան մեր պարտիզում Գրիգորենց Արամը կոտորել (և վոչ թե տանձի) և այլն:

ՎՈՐՈՇՈՒՄ 73. Սովորական շարադասության ժամանակ խոսքի մեջ բայն ամենից վերջն է դրվում, իսկ բայի լրացումները բայից առաջ են դրվում. ամեն մի լրացման լրացում առաջից դրվում է այն բառի վրա, վորի իմաստն ինքը լրացնում է: Յուրաքանչյուր խոսք ունի իմաստի շեշտ, վորի փոփոխումից կախում ունի բառերի այս կամ այն տեսակի դասավորությունը խոսքի մեջ (ինչպես յերևում է վերը բերած որինակից):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 89. Ինքներդ խոսքեր կազմեցե՛ք և իմաստի շեշտի համապատասխան փոփոխեցե՛ք բառերի շարադասությունը:

Սովորական է, արդյոք, բառերի դասավորությունը հետևյալ խոսքերի մեջ. յեթե սովորական չի, ինքներդ սովորական ձևով դասավորեցե՛ք:

- | | |
|---------------------------|--------------------------|
| 1. Ծփում է ծոփն ալեծածան, | 2. Միայն ալիքը Վանա ծովի |
| ծփում է սիրտը տըղի. | մեղմ դիպչում են ափերին, |
| գոռում է ծոփն ահեղաձայն, | հրհրելով հեռանում են |
| նա կովում է կատաղի .. | շրջունջներով անմեկին: |

(Կարմիր Արև, «ԱՂԹԱՄԱՐ»)

ՎՈՐՈՇՈՒՄ 74. Բառերի սովորական շարադասության փոփոխած, շուռ տված ձևը շրջում է կոչվում (ալիքը Վանա ծովի = Վանա ծովի ալիքը):

Ուղիցեցե՛ք հետևյալ խոսքերի մեջ շրջումները.

1 Ձեր լսվում այնտեղ սուրոցը շոգեմեքենայի և վոչ ել արշալուսավող առավոտի հետ՝ կանչերը գործարանների... Անձանոթ եր նրանց աղմուկն ու ժխորը մեր հսկա քաղաքների:

(Կարմիր Արև, «ԱՆՀԱՎԱՍԱՐ ԿՌԻՎԸ»)

2. Այնտեղ այսօր կանգնել են քաղաքները վիթխարի, գործարանները հսկա, ծխնելուղիները յերկնաձիգ

մեքենաներն աղմկոտ... Մեքենաները հսկա, ճշտապահ, սրտերում շոգի ու կրակ, առած ծանրությունն աշխարհի, անցնում են ծովեր ու ցամաքներ, անցնում են լեռներ ու անդունդներ վիթխարի... Մեքենաներն ամենի, վոր ցանցել են յերկրի գունդը հնամի...:

(Կարմիր Արև, «ՄԵՔԵՆԱՆԵՐՆ ՈՒ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՐԴԸ»)

VII ԱՍԱՑՎԱԾ ՅԵՎ ԽՈՍՔԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ. ԼՐԱՑԱԿԱՆ ԽՈՍՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ա. ԱՍԱՑՎԱԾ ՅԵՎ ԽՈՍՔԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԴ ԱՍԱՑՎԱԾԻ ՄԵՋ

§ 79. Աշակերտը գնաց տուն՝ իր դասը պատրաստելու համար:

Աշակերտը գնաց տուն, վոր իր դասը պատրաստի:

Այս յերկուսը ասացվածներ են. ամեն մեկը մի լրիվ, ամբողջական միտք է հայտնում:

Ասացվածի վերջը վերջակետ է դրվում:

ՎՈՐՈՇՈՒՄ 74. Լրիվ արտահայտված միտքը կոչվում է ասացված: Յեթե ասացվածը կազմված է մի խոսքից, կոչվում է պարզ ասացված (ինչպես առաջին որինակը, վորի մեջ մի բայ կա — գնաց): Իսկ յեթե ասացվածը կազմված է յերկու կամ ավելի խոսքերից, կոչվում է բարդ ասացված (ինչպես յերկրորդ որինակը, վորի մեջ յերկու խոսք կա և յերկու բայ — գնաց, պատրաստի):

Վորպեսզի իմանանք, թե բարդ ասացվածի մեջ քանի խոսք կամ նախադասություն կա, պիտի հաշվենք դիմավոր բայերը:

Չպիտի մոռանալ, վոր բայը կարող է դրված չլինել (գեղջվել), բայց զորությամբ հասկացվել. այդ բայերն ել պետք է հաշվել:

ԿԱՆՈՆ 34. Ամեն մի ասացվածի վերջը վերջակետ ե ղրվում: Դրելիս ամեն մի ասացված մեծատառով ե ակավում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 89. Հաշվեցեք, թե ստորև վ բերած ասացվածներից յուրաքանչյուրի մեջ քանի խոսք կա յև վ, արտագրելիս, ամեն մի ասացվածի դիմացը նշանակեցե՛ք:

Ընթերցարանը բաց եր. հաճախորդները նստած կարդում եյին (2):—Սուրբիկն առավոտյան վաղ վեր կացավ, շտապ նախաճաշ արավ, գրքերը վերցրեց ու դպրոց գնաց:—Աշխուրհուրդն այսոր նիստ ունի. որակարգում միքանի հարցեր կան, վորոնցից ամենապիտավորը դպրոցական կոուպերատիվ կազմակերպելու հարցն ե:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 90. Պարզեցեք, թե ստորև բերած բարդ ասացվածների մեջ խոսքերն ինչ հարաբերություն ունեն իրար հետ. արդյոք, նրանք քերականորեն իրարից անկախ են, թե՛ խոսքերից մեկը մյուսի լրացումն ե դառնում:

1. Մենք գնացինք տուն ե մեր դասերը պատրաստեցինք:—Տիգրանն այսոր հիվանդ եր, ուստի նա դասի չեկավ:—Մենք այստեղ կարդում ենք, իսկ դուք այդտեղ գրում եք:—Ահա յեկավ Վաղգենը. նա գյուղ եր գնացել:

2. Մենք գնացինք տուն, վոր մեր դասերը պատրաստենք: Վորովհետև Տիգրանն այսոր հիվանդ եր, ուստի նա դասի չեկավ Յերբ մենք այստեղ կարդում ենք, այն ժամանակ դուք այդտեղ գրում եք:

ՎՈՐՈՇՈՒՄ 75. ա) Բարդ ասացվածի մասերը կազմող խոսքերը կարող են քերականորեն իրարից անկախ լինել, այսինքն, մեկը մյուսի յենթական կամ այլ տեսակի լրացումը չլինել յեվ առանձին վերցրած՝ ուրույն միտք արտահայտել (ինչպես վերևի առաջին չորս խոսքերը). բարդ ասացվածի մեջ խոսքերի այդ տեսակ կապակցությունը կոչվում ե ճամադասական կապակցություն:

բ) Բարդ ասացվածի մասերը կազմող խոսքերը կարող են քերականորեն իրարից անկախ չլինել, նրանցից

այս կամ այն կարող ե ծառայել մի ուրիշ խոսքի համար իբրեվ լրացում (որ.՝ յենթակա, կրող լրացում, տեղի պարագա ե այլն) յեվ, այդպիսով, ուրույն միտք չարտահայտել, այլ ստորադասվել մի ուրիշ՝ ուրույն կամ անկախ միտք արտահայտող խոսքի (ինչպես վերևի յերկրորդ չորս որինակաները). բարդ ասացվածի մեջ խոսքերի այդ տեսակ կապակցությունը կոչվում ե ստորադասական կապակցություն: Ստորադասական կապակցության մեջ ուրույն կամ անկախ միտք արտահայտող խոսքը կոչվում ե գլխավոր խոսք կամ նախադասություն, իսկ սրա միտքը լրացնող, իբրև լրացում ծառայող խոսքը կոչվում ե յեղորդական կամ լրացական խոսք:

1. Համադասական կապակցություն

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 91. Կազմեցե՛ք քսրդ ասացվածներ, վորոնց խոսքերը կապված լինեն՝

1. յեվ շաղկապով (որ.՝ յես գնացի ե վերադարձա):
2. ու » (տեղ հասանք ու հետ դարձանք):
3. ել » (յես ել գնացի, դու ել գնացիր):
4. մանավանդ շաղկապով (յես սոված եմ, մանավանդ սաստիկ հոգնած եմ):
5. վոչ միայն—այլեվ շաղկապով (վոչ միայն մութ ե, այլև ցուրտ ե):
6. թե—թե շաղկապով (թե կերել եմ ե թե խմել):
7. յե՛վ—յե՛վ » (ե՛ կերել եմ, ե՛ խմել):
8. վորը—վորը » (վորը տանն ե նստած, վորը՝ պարտեզում):
9. կա վոր—կա վոր շաղկապով (կա վոր քաղցր ե, կա վոր՝ թթվաշ):
10. նախ—ապա—վերջապես շաղկապով (նախ՝ հայտել ես, ապա՝ ծեծել ես, վերջապես՝ նրա դանակը թոցըրել ես):

11. այսինքն, այն ե շաղկապով (գլուղում յերեք շերտավորում ե առաջացել, ահա ե՝ չքավորների, միջակների ե կուլակների):

12. ուստի, հետեւաբար շաղկապով (դու չես աշխատում, ուստի չես առաջադիմում):

13. վոչ թե—այլ շաղկապով (վոչ թե պիտի խաղաս, այլ պիտի պարապես):

14. կամ—կամ շաղկապով (կամ պիտի խաղաս, կամ պիտի պարապես):

15. Թե շաղկապով (որ.՝ դու պիտի կարդաս, թե գրես):

16. Սակայն, այնուամենայիվ բայցյեւայնպես շաղկապով (հիվանդ եմ, բայցևայնպես կկատարեմ):

17. Բայց, բայցյեւայնպես շաղկապով (նա պիտի գար, բայց չեկավ):

18. Իսկ շաղկապով (չես կարդում եմ, իսկ դու գրում ես):

19. Մինչդեռ շաղկապով (դու նոր ես վեր կենում, մինչդեռ այժմ դպրոցում պիտի լինեիր):

20. Թե վոչ շաղկապով (պետք ե գնանք, թե վոչ կուշանանք):

Այս տեսակի կապակցութիւնները ճամադասական են. այդ ստացւածների մեջ խոսքերը քերականորեն իրարից անկախ են, մեկը մյուսի լրացում չեն դառնում:

ԿԱՆՈՆ 35. Համադաս, մտքերով միմյանց մոտիկ խոսքերը իրարից բաժանւում են ստորակետերով: Համադասական յեւ, ու շաղկապներից առաջ ստորակետ չի դրվում, յեթե նրանցով կապւող խոսքերի յենթական նույնն ե (որ.՝ յես գնացի ե նրան տեսա կամ՝ յես գնացի ու նրան տեսա): Ենթականները տարբեր լինելու դեպքում, ստորակետ դրվում ե (որ.՝ յես գնացի, ե դու չեկար:— Նստած ես, ու բո միտքն ուրիշ տեղ ե):

ԿԱՆՈՆ 36. Յեթե յեւ, թե շաղկապները կրկնվում

են բոլոր համադաս խոսքերի կամ խոսքի հարանման իմաստով լրացումների սկզբում, այս շաղկապներից առաջ դրվում ե ստորակետ, իսկ շաղկապների վրա կարող ե շեշտ դրվել (որ.՝ ե՝ յես, ե՝ դու, ե՝ նա հանցավոր ենք:— Յեւ հուզվում եմ, ե՝ լալիս):

ԿԱՆՈՆ 37. Յերբ կամ շաղկապը բացադրական նշանակութուն ունի, առաջից ստորակետ չի դրվում (որ.՝ Մասիսը կամ Արարատը բարձր սար ե):

ԿԱՆՈՆ 38. Յերբ համադաս խոսքերից յերկրորդի մեջ բայը գեղջվում ե, բուլթ ե դրվում (որ.՝ Աշոտը Յերևան ե գնում, իսկ Հուսիկը՝ Քանաքեռ):

2. Ասորագասական կապակցութիւն

§ 80. 1. Աշակերտը մտավ գրախանութ, վոր գիրք գնի:

2. Աշխրհրդի անդամները հավաքվեցին, վոր ժողով անեն:

3. Գյուղացին արտը գնաց, վոր ցորենը հնձի:

Պատասխանեցե՛ք հետեւյալ հարցերին.

1. Ինչո՞ւ աշակերտը գրախանութ մտավ:

2. Աշխրհրդի անդամներն ինչո՞ւ հավաքվեցին:

3. Գյուղացին ինչո՞ւ գնաց արտը:

Յույց տվե՛ք, թե առաջին ասացվածի մեջ վո՞ր նախադասութիւնն ե ուրույն միտք արտահայտում ե վո՞րը իբրեւ լրացում՝ ծառայում:

Կարելի՞ յե միայն այսքանն ասել՝ աշակերտը մտավ գրախանութ:

Կարելի՞ յե միայն այսքանն ասել՝ վոր գիրք գնի:

ՎՈՐՈՇՈՒՄ 76. Լրացական խոսքերն, առանձին վերջերած, թերի յեն, ուրույն միտք չունեն. նրանք մի ուրիշ խոսքի համար ծառայում են իբրեւ լրացում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 92. Կազմեցե՛ք բարդ ասացվածներ՝ վերեւ բերված 3 ասացվածների որինակով: Ճո՛ւց տվե՛ք

ձեր կազմած ասացվածների գլխավոր (ուրույն միտք արտահայտող) և յերկրորդական (լրացական) մասերը:

Ի՞նչ շաղկապով են կապվում այդ խոսքերը:

§ 81. Աշակերտը մտավ գրախանութ՝ գիրք գնի: Գյուղացին արտը գնաց՝ ցորենը հնձի:

ԿԱՆՈՆ 39. Յեթե ստորադասական կապակցության վոր շաղկապը (չշփոթեք վոր հարաբերական կամ շաղկապական դերանվան հետ) զեղջվում ե, այդ դեպքում՝ զեղջված շաղկապի փոխարեն բուժ ե դրվում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 93. Խնքներդ կազմեցե՛ք նման ասացվածներ յեվ վոր ստորադասական շաղկապը զեղջեցե՛ք ու գրի՛ առեք:

Պարզեցե՛ք, թե այդ կապակցության լրացական խոսքը գլխավոր նախադասության վոր բառի իմաստն ե լրացնում կամ վոր բառի լրացումն ե դառնում և ի՞նչպիսի լրացում: Նրա ի՞նչ թերին ե լրացնում:

Յեթե միայն ասենք՝ աշակերտը մտավ գրախանութ, — արդյոք, կիմանանք, թե աշակերտն ինչո՞ւ մտավ գրախանութ:

ՎՈՐՈՇՈՒՄ 77. Այն լրացում խոսքը, վոր լրացնում ե գլխավոր նախադասության բայի գործողության նպատակի պարագան, կոչվում ե՝ յերկրորդական նպատակի պարագայական նախադասություն:

Յո՛ւյց տվեք նպատակի պարագայական խոսքը.

1. Կարծես հրաշունչ վիշապի նման,
ուզում են շնչել ու իրենց քարշել
անհուն բարձունքից փայլուն աստղերը,
վոր նրանց թաղեն մշուշ-ծխի մեջ:

(Կարմիր Արև, «ԳՈՐԾԱՐԱՆ»)

2. Վերջը տեսավ, վոր ճար չելավ,
թևեր առավ ինքն ել փախավ,
փախավ, կորավ, վոր ել ենպես

դատարկ, սնակ ու սևերես
վոչ պատահի պարտքատերին,
վոչ յերևա լույս աշխարհին՝

(Հովհ. Թում., «ԱՆԲԱՆՏ ՎԱՃ»)

§ 82. Աշակերտը մտավ գրախանութ, վոր գիրք գնի — աշակերտը մտավ գրախանութ՝ գիրք գնելու համար: Գյուղացին արտը գնաց, վոր ցորենը հնձի — գյուղացին արտը գնաց՝ ցորենը հնձելու համար:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 94. Ի՞նչ տարբերություն կա նախորդ §-ում անջատման գծից (—) այս կողմ և այն կողմ գտնվող ասացվածների մեջ՝ 1. իմաստի տեսակետից, 2. ձևի տեսակետից:

ՎՈՐՈՇՈՒՄ 78. Ստորադասական կապակցություն ունեցող բարդ ասացվածը կարելի յե պարզել, այսինքն՝ այնպես արտահայտել, վոր այլևիս բարդ ասացված չլինի, այլ՝ պարզ ասացված, յերկու դիմավոր բայերի փոխարեն՝ մի դիմավոր բայ լինի: Բարդ ասացվածը պարզելով, մենք նրա իմաստը չենք փոխում:

ԿԱՆՈՆ 40. Բարդ ասացվածը պարզելիս, ստորադասական շաղկապն այլևիս չենք դնում, լրացական խոսքի բայը փոխարինում ենք դերբայով (գնելու, ժողով անելու, հնձելու — ապառնի դերբայ) կամ վորեվի այլ կերպ, վոր կտեսնենք հետագայում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 95. Պարզեցե՛ք նպատակի պարագայական խոսքերը հետևյալ հատվածի մեջ ու գրի՛ առեք. —

Որ՝ Սերոբը գնաց, վոր ջուր բերի — Սերոբը գնաց ջուր բերելու կամ՝ Սերոբը գնաց ջրի:

Ուսուցիչը մտավ դասարան, վոր դաս պարապի: Աշակերտը վեր կացավ, վոր դասը պատասխանի: Նա մոտեցավ գրատախտակին, վոր ուսուցչի ասածը գրի: Զրնջիչը վերցրեց, վոր սխալ գրածը ջնջի և ուղիղը գրի: Աշակերտները տետրակները հանեցին, վոր ուզվածը գրի:

առնեն: Ուսուցիչը մեկ-մեկ մոտենում եր աշակերտներին, վոր սխալ գրածները բացատրի և ուղղել տա:

§ 83. Աշակերտը քնից վեր կացավ, յերբ լույսը բացվում եր: Մենք տուն հասանք, յերբ արևը մտնում եր:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 96. Կազմեցե՛ք նման ասացվածներ: Գտեք գլխավոր և յերկրորդական մասերը: Պարզեցե՛ք, թե յերկրորդական խոսքը գլխավորի համար իբրև ինչ լրացում ե ծառայում:

Պարզեցե՛ք վերոհիշյալ յերկու և ձեր կազմած բարդ ասացվածները:

Կանոն հանեցե՛ք, թե լրացական ժամանակի պարագայական խոսքերն ինչպես ենք պարզում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 97. Կազմեցե՛ք ժամանակի պարագայական խոսքեր, վորոնք գլխավոր խոսքի հետ կապված լինեն հետեվյալ շաղկապներով.

1. Հենց վոր, թե չե շաղկապներով—որ.՝ Հենց վոր դու չեկար, չես գնացի:

2. Քանի, քանի դեռ շաղկապներով—որ.՝ Քանի դեռ դու այստեղ ես, նա չի գա:

3. Մինչ, մինչդեռ, այն ինչ շաղկապներով.—Մինչդեռ չես կարդում եյի, դու խաղ ելիր անում:

4. Մինչև, մինչև վոր շաղկապներով.—Մինչև սենյակը տաքանա, հիվանդի հոգին դուրս կգա:

5. Վոր շաղկապով—վոր լսեցի, վեր թռա կամ՝ այս վոր լսեցի, վեր թռա:

Այս ասացվածներում լրացական խոսքը նախադաս ե (գլխավորից առաջ), թե՛ հետադաս (գլխավորից հետո):

ՎՈՐՈՇՈՒՄ 79. Լրացում խոսքը, տեղին նայելով, կարող ե նախադաս լինել:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 98. Ուրիշ տեսակի լրացական խոսքեր դիտելու համար, կազմեցե՛ք բարդ ասացվածներ՝ ստորեվ մատնանշած շաղկապներով յեվ որինակներով.—ձեր

կազմած բարդ ասացվածները պարզեցե՛ք ցույց տված կամ այլ ձևով:

Ա. 1. Այնպես-ինչպես—որ.՝ գիրքդ այնպես պահիր, ինչպես քո աչքն ես պահում կամ՝ գիրքդ պահիր, ինչպես քո աչքը—գիրքդ պահիր քո աչքի պես:

2. Այնպես—կարծես թե, վոնց վոր—որ.՝ այնպես ես դարմանում, կարծես յերբեք չես տեսել:

3. Նույնչափ—վորչափ—նա նույնչափ իրավունք ունի, վորչափ դու:

4. Բանի—այնքան.—Քանի մեծանում ե, այնքան խելոքանում ե:

5. Ավելի—քան.—Վաչիկն ավելի չե աշխատում, քան Վարսիկը:

6. Այնպես—վոր.—Այնպես բարկացավ, վոր իրեն կորցրեց:

Պարզեցե՛ք, թե այս ասացվածների մեջ յերկրորդական խոսքերը գլխավոր խոսքի վեր բառն ինչպես են լրացնում, ինչ են ցույց տալիս:

Խնքներդ կազմեցե՛ք ձեզի կամ վորակի յեվ չափ ու քանակի լրացական պարագայական խոսքեր, պարզեցե՛ք այդ խոսքերն ու գրի առեք:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 99. Բ. 1. Վորովհետեւ—ուստի, այդ պատճառով, ուրեմն.—վորովհետեւ չեկար, այդ պատճառով չկարողացար տեսնել—չգալու պատճառով չկարողացար տեսնել: Վորովհետեւ հիվանդ ելիր, դասի չեկար—հիվանդ լինելու պատճառով դասի չեկար—հիվանդ լինելով, դասի չեկար:

2. Վոր—Յես գնացի Արամի մոտ, վոր գիրքս բերեմ:

3. Թե—Մարդ ել չեն ուղարկում, թե մի պատասխան բերի:

Թե, թե վոր, չեթե—այնժամանակ, ուրեմն, ապա—չեթե չեղանակը լավ լինի, ուրեմն եքսկուրսիա կգնանք:

5. Թե յեվ, թեպետ, շնայած վոր—բայց, սակայն, բայց և այնպես, դարձյալ, այնուամենայնիվ.—թեև շատ ցուրտ էր, բայց գնացինք:

6. Ով, ինչ, վորքան, ուր—կուգես, կուզի.—ինչ կուգես արա, նրան բան չի լինի:

7. Թեկուզ, մինչեվ անգամ յեթե, նույնիսկ յեթե—դարձյալ, ելի.—Թեկուզ կրակ դառնաս, նրան վոչինչ չես անի:

Պարզեցեք այս ասացվածներում գլխավոր և լրացական խոսքերի հարաբերությունը, ցույց տվեք, թե վորն է գլխավոր, վորը՝ լրացական. ինչ անուն կտաք այդ լրացական խոսքերին:

Ինքներդ կազմեցեք ճիմունքի (պատճառի, նպատակի, պայմանի, հակառակ հիմունքի) պարագայական խոսքեր, պարզեցեք այդ խոսքերն ու գրի առեք:

Ցույց տվեք ասացվածները, խոսքերը, նրանց կապակցությունը, գլխավոր և լրացական մասերը:

1. Գլխատուխան մուսլ բեմին դու գլուխդ վայր կրերես, և զանգերը կղողանջեն, և դաշույնը կփաղփաղի, ու մկանունք կաղաղակեն, և կլինի շքեղ հանդես, մեծապայծառ տոն ու հանդես կարմիր արյան ու մետաղի: Յեվ արեւը ծիրանավառ, և յերեկոն ծծմբաշունչ, յերեկոն ու արեգակը արնափրփուր, հրդեհավառ կտեսնեն, թե ինչպես ես դու կրում պատիժը անտրտունջ, թե ինչպես լուռ կանչնչանան քո աչքերն ու դեմքը պայծառ:

(Կարմիր Արև, «ԳԼՈՒԽԸ»)

2. Կարիք ու կարիք ձմռան որերում, նույնպես գարնանը—որեք զովարար, յիրը ծիծեռնակը իր բունն է հյուսում՝ զարնան վերադարձ տոնելու համար, իսկ ձագուկները կուշտ ու ապահով՝ միշտ ճովողում են իրանց մորը հետ, կարծես ուզում են՝ ուրախ յերգերով ինձ ծաղրի բռնել ու հեգնել հավիտ:

(Կարմիր Արև, «ՇԱՊԿԻ ՅԵՐԳԸ»)

3. Սահում ե մաքորը, զնգում մեքենան, անդուլ աշխատում ու յերգում են նրանք.

— «Հին Գերմանիա, պատան ենք գործում քեզ համար, նրան մենք հյուսում ենք մեր անեծքը վառ—գործում ենք անվերջ, անդադար»:

(Կարմիր Արև, «ՋՈՒԼՅԱՆՆԵՐԸ»)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 100. Կազմեցե՛ք ասացվածներ՝ ստորեվ ընդված ասացվածների նմանությունը յեվ պարզեցե՛ք ցույց տված ձևով:

ա. 1. Ովքեր հիվանդ են, նրանք կարող են գնալ—հիվանդները կարող են գնալ:

2. Ով խելք ունի, թող իր գլուխն ազատի—խելք ունեցողը թող իր գլուխն ազատի:

3. Ով աչք գիտե, նա չի զարմանա—այդ իմացողը չի զարմանա:

4. Ինձ հայտնի չե, վոր Արամն այստեղ է—ինձ հայտնի չե Արամի այստեղ լինելը:

5. Բանն այն չի, վոր միայն ուտես, այլ վոր նաև աշխատես—բանը միայն ուտելը չե, այլ նաև աշխատելը:

6. Ժամանակ է, վոր մենք գնանք—Ժամանակ է մեզ գնալու:

ՀԱՐՅ.—Այս լրացական խոսքերը գլխավոր խոսքի վոր բառի համար ինչ լրացում են:

Ինքներդ կազմեցե՛ք ասացվածներ՝ լրացական յեմքապա խոսքերով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 101. Բ. 1. Ով վոր փող ունի, նրանից առ—փող ունեցողից առ:

2. Վորը հավանեմ, այն կվերցնեմ,—հավանածս կվերցնեմ:

3. Նա հայտնեց, վոր Արշակը չեկել է—նա հայտնեց Արշակի գալը:

4. Վախենում եմ, վոր նա բարկանա—նրա բարկանալուց եմ վախենում:

5. Չեմ իմանում, թե յեկողն ո՞վ է—յեկողի ո՞վ լինելը չեմ իմանում:

Ինքներդ կազմեցեք լրացական խճդիր խոսքերը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 102. Կազմեցե՛ք ասացվածներ՝ ստորեվ բերված ասացվածների նման յեվ պարզեցե՛ք ցույց տված ծեփով:

1. Տո՛ւր ինձ այն գիրքը, վոր դու կարդացել ես—քո կարդացած գիրքն ինձ տո՛ւր:

2. Կատարի՛ր այն խոսքը, վոր քեզ ասել եմ—քեզ ասածս խոսքը կատարի՛ր:

3. Պարտաճանաչ չե այն աշակերտը, վոր իր դասը չի պատրաստում—իր դասը չպատրաստող աշակերտը պարտաճանաչ չե:

Այս ասացվածներում լրացական խոսքերը գլխավոր խոսքի վրժ բառի իմաստն են լրացնում:

Կանոն դուրս բերեք, թե լրացման լրացում խոսքերն ինչպես կարելի չե պարզել:

Պարզեցե՛ք հետեվյալ ասացվածները.

1. Այն տղան, վոր խաղում եր, յեկավ:

2. Այն գիրքը, վոր քեզ եմ տվել, տո՛ւր:

3. Այն քաղաքը, ուր դու յես ապրում, գեղեցիկ է:

4. Այն գիշերը, յերբ դու մրսեցիր, ցուրտ եր:

Այս ասացվածներում լրացական խոսքերն ի՞նչպես են դասավորված:

ՎՈՐՈՇՈՒՄ 80. Լրացական խոսքերը, նայելով տեղին, կարող են լինել նայել միջադաս: Ուրեմն, լրացական խոսքերը գլխավոր խոսքի նկատմամբ, նայելով տեղին, կարող են լինել նախադաս, միջադաս յեվ վերջադաս:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 103. Կազմեցե՛ք ասացվածներ, վորոնց մեջ լինեն ուղղակի խոսքեր (ուրիշի ասած խոսքեր) և ուղղակի խոսքերն անուղղակի դարձրե՛ք ստորև բերած որինակների ձևով.

1. Ազատն ասաց. «Յես այսոր հիվանդ եմ, դասի չեմ կարող գալ»—Ազատն ասաց, վոր ինքն այսոր հիվանդ է, դասի գալ չի կարող:

2. Սիսակն ասաց. «Գրիգոր, յես ուժեղ եմ, իսկ դու թույլ ես»: Սիսակն ասաց Գրիգորին, թե ինքն ուժեղ է, իսկ Գրիգորը՝ թույլ:

3. Մինասն ասաց. «Բազրատին տեսա, իսկ Ոննիկին տեսնել չկարողացա»: Մինասն ասաց, վոր Բազրատին տեսել է, իսկ Ոննիկին չի կարողացել տեսնել:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 104. Դիտեցե՛ք փակագծերում առնրված խոսքերը.

1. Սմբատ Աղասյանը (այդ է նրա անունը ազգանունը) աշխորհրդի նախագահ է ընտրված:

2. Սարգիսը (միթե չես հիշում) այնտեղ եր:

3. Շուկայում (հենց նոր իմացա) միսն աժանացել է:

ՎՈՐՈՇՈՒՄ 81. Այն խոսքերը, վորոնք մտնում են ուրիշ խոսքերի մեջ, քայք քերականորեն չեն կապակցվում նրանց հետ, կամ շատ յերկրորդաբար են պարզում նրանց իմաստը, կոչվում են միջանկյալ խոսքեր:

ԿԱՆՈՆ 41. Միջանկյալ խոսքերն առնվում են փակագծերի կամ ստորակետերի մեջ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 105. Վերլուծեցե՛ք ստորև բերված բարդ ասացվածը, ցույց տալով, թե վոր խոսքը վորի հետ ինչ յեղանակով է կապված, վորն է ուրույն իմաստ արտահայտում, վորն է լրացական խոսք և թե լրացական խոսքը այս կամ այն խոսքի իմաստն ինչպես է լրացնում:

Յերբ Սուրիկը գործն ավարտեց, վեր կացավ, զգեստները հագավ, գնաց քաղաքի մոտով հոսող գետը, ուր հաճախ լողացել եր, զգեստները հանեց, նետվեց սառնորակ ալիքների մեջ և, վորովհետև գիտեր, թե արևի ջերմությունը վորքան ոգտակար է (ուսուցչից եր լսել), մեկ-մեկ

դուրս եր գալիս, գլխարկը գլուխը դնում, մերկ պառկում ջինջ յերկնքի տակ, արևի վաննա ընդունում (մարդիկ չկալին մոտերքը), նորից ջուրը նետվում, և այսպես՝ միքանի անգամ, վորից հետո զգեստները հագավ, շտապեց դպրոց, վոր չուշանա աշխորհրդի ժողովի նիստից (նախագահն ինքն եր):

Դիտեցեք այս բարդ ասացվածի կետադրությունը:

VIII ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Անփոփում՝ հավելումներով)

§ 84. Դիտեցեք ստորակետը (,).

Ա. Յերևանը, Թիֆլիսը, Բագուն և Բաթումը քաղաքներ են: Յես, դու, նա Արամին տեսել ենք:

Դու սիրում ես կանաչ, կարմիր, կապույտ և մանուշակագույն գույները:

Բ. Բոլոր կողմերից հավաքված յեղան՝ թուրք, իտալացի, հնդիկ, վրացի, ռուս, շոտլանդացի, հայ, խոնխուզ, թաթար, կիրգիզ, չինացի:

(Կարմիր Արև, «ԱՄԵՆԱՊՈՆՄ»)

ԿԱՆՈՆ 42. Խոսքի մեջ հարանման իմաստով լրացումները կամ խոսքերի բազմակի մասերն իրարից բաժանվում են ստորակետով, յեթե յեվ, ու շաղկապներով միացած չեն:

Բ. Սերոբ, յեկ այստեղ:—Տիգրան, գնա տուն:—Իմ փոքրիկ կատուն, Վահիկ, չգիտե՞ս ուր ե:—Գիրքդ տա՛ս, Սեդիկ:

ԿԱՆՈՆ 43. Կոչական բառերը խոսքից բաժանվում են ստորակետով, յեթե նախադաս են կամ վերջադաս, իսկ յեթե միջադաս են, յերկու կողմից առնվում են ստորակետերի մեջ:

Գ. 1. Մեր Արշակը, կարծեմ, շուկա գնաց:

2. Արամը, հենց նոր իմացա, գնացել է Յերևան:

3. Տները, ինչպես ասացի, Նայիրյան այդ քաղաքում ցածրիկ են:

ԿԱՆՈՆ 43. Միջանկյալ բառերն ու միջանկյալ նախադասութուններն առնվում են ստորակետերի մեջ:

Դ. Գարունը յեկավ, վարդը փթեց, սոխակն սկսեց դալալել: Գնացի, տեսա, վերադարձա ու պատմեցի:

ԿԱՆՈՆ 44. Համադաս, մտքերով միմյանց մոտիկ կարճ նախադասութունները բաժանվում են ստորակետով. վերջին յերկուսը, յեթե միացած են յեվ, ու շաղկապներով, ստորակետով չեն բաժանվում:

Ե. Յեվ գնացի, և՛ տեսա, և՛ վերադարձա:—Թե գնացի, թե տեսա, թե վերադարձա: Յես գնացի, և դու յեկար:

ԿԱՆՈՆ 45. Յերը միեմնույն յենթակայով համադաս խոսքերը կապված են յեվ, թե շաղկապներով, վոր կրկնվում են համադաս խոսքերից ամեն մեկի վրա, այդ դեպքում համադաս խոսքերը բաժանվում են ստորակետերով: Յեթե համադաս խոսքերը կապվում են յեվ, ու շաղկապներով, բայց տարբեր յենթականեր ունեն, բաժանվում են ստորակետով:

2. Յես յեկա, նաև դու յեկար:—Բոլորը յեկել ելին, մինչև անգամ Գրիգորն ել եր յեկել:—Վոչ միայն յես ելի յեկել, այլև դու:—Մերթ նստում ելինք, մերթ կանգնում:—Յերբեմն տանն եմ լինում, յերբեմն դպրոցում:—Նա ապուշ է, այսինքն՝ բան չի հասկանում:—Դու մրսել ես, ուստի հիվանդ ես:—Կամ պիտի պարապես, կամ պիտի խաղաս:—Պիտի գար, բայց չեկավ:—Յես կարդում եմ, իսկ դու գրում ես:

ԿԱՆՈՆ 46. Համադաս կարճ ու պարզ խոսքերը, վորոնք միացած են համադասական շաղկապներով, բաժան-

վում են ստորակետով: Կամ շաղկապից առաջ ստորակետ չի դրվում, յեթե բացատրական նշանակութիւնով եւ գործածվում (Մասիս կամ Արարատ):

Է. Գնացի, վոր նրան տեսնեմ:— Յես յեկա, յերբ լույսը բացվում եր.— Տեսա աչն տղային, վոր հիվանդ եր:— Աչն տղան, վոր հիվանդ եր, առողջացավ:

ԿԱՆՈՆ 47. Բարդ ասացվածի գլխավոր յեվ լրացական մասերը միացնող ստորադասական շաղկապներից առաջ ստորակետ եւ դրվում: Միջադաս լրացական խոսքը յերկու կողմից ստորակետերի մեջ եւ առնվում:

Ը. Յերբ վոր գարունը գալիս ե... Ուր վոր գնաս... Ինչ վոր ասես... Ով վոր տեսնի... Թե վոր գաս... Ճիշտ վոր... Իսկապէս վոր...

ԿԱՆՈՆ 48. Յերբ վոր շաղկապն ավելորդ կերպով իբրեւ քարմատաւ գործ եւ ածվում ով, ինչ, ուր... եւ այլ բառերից հետո, այդ բառերից ստորակետով չի բաժանվում:

Դիտեցե՛ք ստորակետը եւ բացատրեցե՛ք.

Զիղջը ֆնաց, տնպահ դարձավ,
ճայը բոլոր փողերն առավ,
առավ, նստեց նավի միջին,
հասավ Մըսըր, Զինումաչին,
Ֆարս, Հընգաստան,
Արաբըստան...
Ե՛լ թանկագին քերմանի շաւ,
Ել մարգարիտ, գմրուխտ ու լաւ,
հնդու խուրմա, փըստա, բաղամ,
եւ... վա՛ր մեկի անունը տամ.
Ինչ վոր տեսավ, աչքը սիրեց,
բոլ բոլ առավ, նավը լցրեց:

(Հովհ. Թում. «ԱՆԲԱՆՏ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ»)

§ 85. Դիտեցե՛ք ընթերցելը (՝):

1. Ա. Արա՛յն, ինչ վոր կուղես—Արա՛յն ինչ վոր կուղես:
2. Լսի՛ր, թե ինչ եմ ասում—Լսի՛ր ինչ եմ ասում:

3. Յես Յերեան եմ գնում, իսկ դու Քանաքեռ եւ գնում: Յես Յերեան եմ գնում, իսկ դու Քանաքեռ:

4. Իմ ընկերներն են՝ Արամը, Սիսակը, Մուկուչն ու Շուշիկը:

5. Նախ՝ դու չար ես, յերկրորդ՝ ծուլ ես, յերրորդ՝ անբարեխիղճ ես:

6. Յերեանը՝ Հայաստանի մայրաքաղաքը՝ գտնվում եւ Հրազդանի ափին:

7. Յես Արամին զգուշացրի՝ առանց նրան վիրավորելու:

8. Հողժողկոմատի՝ դպրոցին նվիրած հողամասը մեծ ե:

բ. 1. Ասում են՝ ուռին աղջիկ եր ինձ պես:

2. Ա՛խ, իմ բախտը կանչում ե ինձ, չեմ հասկանում՝ դեպի ուր...

3. Դարերի մշուշի վրա գրում եր՝ «վեց վիլայեթ...»:

4. Սողոմ հուսահատ հարցնում եր՝ «ինչո՞ւ, ինչո՞ւ...»:

ԿԱՆՈՆ 49. Բութ դրվում ե.

1. Գլխավոր յեվ լրացական խոսքերի մեջ, յերբ նրանց միացնող ստորադասական շաղկապը զեղջված ե:

2. Համադաս խոսքերից յերկրորդի մեջ, յերբ մի բառ (որ.՝ բայը) զեղջված ե:

3. Թվարկությունից առաջ:

4. Թվարկություն ցույց տվող բառերի վրա:

5. Դերբայ լրացումների յեվ խոսքի մեջ, յերբ դերբայ լրացումներն իրենց հերթին լրացումներ ունեն:

6. Կարճ ուղղակի խոսքից առաջ:

§ 86. Դիտեցե՛ք միջակետը (·):

Ա. 1. Յերեկոյան ժամի վեցին յես հասա գլուղ. այդ ժամանակ արևն արդեն մայր եր մտնում:

2. Կամաց մի՛ գնա, վոր ուշանաս. արագ գնա, վոր հասնես:

3. Պետրոսն ասաց. «Այսօր յերեկոյան մեր տանը կլինեմ»:

Բ. 1. Ամպերը դանդաղ ուղտերի նման՝
նոր են ջուր խմած՝ ձորից բարձրանում.
քարոտ թիկունքից Չաթինդաղ լեռան
նոր և արեւ պռունգը հանում:
(Կարմիր Արեւ, «ԱՆՈՒՇ»)

2. Պատասխանը կարճ և ազդու չե. փրկութեան միջոցը՝ մեկ. բավական չի ստեղծել մեքենաներ ու գործիքներ, բավական չե տքնել ու չարչարվել գործարանների մը մեջ. պետք է տեր դառնալ այդ մեքենաներին, այդ թեւովոր հզոր գործիքներին, պետք է նրանց ծառայեցնել հանուրի, ամբողջի ոգւին:

(Կարմիր Արեւ, «ՄԵՔԵՆԱՆԵՐՆ ՈՒ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՐԴԷ»)

ԿԱՆՈՆ 50. Միջակետով բաժանվում են.

1. Համադաս յերկար խոսքերը, վորոնք վորոշ ինքնուրույնութիւն ունեն:

2. Բարդ համադաս խոսքերը, վորոնք յերկրորդական խոսքեր ունեն:

3. Ուղղակի խոսքերից առաջ, այսինքն՝ լերբ ուրիշի խոսքերն անփոփոխ, ինչպես ուրիշն է ասել, չակերտների մեջ է բերվում, ուղղակի խոսքի սկզբում, չակերտներից առաջ միջակետ է դրվում:

4. Վերնագրերից հետո:

§ 87. Դիտեցե՛ք ՎԵՐՋԱԿԵՏՐ (:).

1. Յես գնացի, վոր նրան տեսնեմ. բայց, վորովհետեւ տանը չեմ, չկարողացա տեսնել:

ԿԱՆՈՆ 51. Վերջակետ դրվում է լրիվ արտահայտված մտքի կամ ասացվածի վերջը:

§ 88. Դիտեցե՛ք շեշտը ('), հարցականը (?) յեվ յերկար նշանը (~).

1. Ե՛յ, դուք, Ռոկֆելլեր, Սալինես, Մորգան... խոսում եք, մենք դեռ կգանք....

2. Գիտե՛ք, թե աշխարհի արգանդից
ինչքան հանճարեղ մարդիկ,
ինչքան, ինչքան կրոմվել....
յեղել են, կան դեռ
ու կգան:

3. Արի, ջան իգիթ, արի, անիրավ....
եւ մի ուշացնի, յես շատ եմ կացել,
եւ մի լացացնի, յես շատ եմ լացել....

ԿԱՆՈՆ 52. ա. Կոչականների, հրամայական քայերի յեվ կարճ արտասանվող ծայնարկութիւնների վրա ռեւս է դրվում: Յեթե կոչականն ածական ունի, շեշտն անցնում է ածականին:

բ. Հարց արտահայտող քառերի վրա հարցական է դրվում:

գ. Ճերկար արտասանվող քառերի, ծայնարկութիւնների վրա յերկար կամ բացազանչական նշան է դրվում:

§ 89. Դիտեցե՛ք չակեթսները (« » , ‘ ‘).

1. Ասաց. «Խեղճ տղա, շատ ես չարչարվում»:

2. Դաշտերում անթաղ մնաց Պողոսը—«բա՛ջ ջանքեղար»:
Ո՛ւր է այդ «բա՛ջը», թող մի գնալս դա:

3. Մենք Հ. Թումանյանի «Անուշ» պոեմն ենք կարդում:— Յես , խորհրդային Հայաստան՝ եմ ստանում:— Մենք «Կինո պրոլետար» գնացինք:

ԿԱՆՈՆ 53. ա. Ուրիշի խոսքերն առնվում են չակերտների մեջ, յեթե ուղղակի յեն բերվում, ինչպես ուրիշն է ասել, առանց փոփոխելու:

բ. Յերբ բարդ հակառակ իմաստով կամ հեզնական մտքով է գործ ածվում, առնվում է չակերտների մեջ:

գ. Գրվածքների, լրագրերի, հանդեսների անունները նույնպես չակերտների մեջ են առնվում:


§ 90. Դիտեցե՛ք կախման կեթերը (...).

ա. 1. Հանկարծ մի պաթիւն... ահռելի խուճապ... չորս կողմ դիակներ... ա՛յ ու ձախ փախուստ...

Ա) 1. Վերջակետ, 2. միջակետ, 3. ստորակետ, 4. ընթ,—
այս չորսը տրոհության նշաններ են կոչվում, վորոնցով
արտահայտվում է բառերի տրոհությունը կամ բաժանու-
մը, բառերն իրար հետ չլիցիթելու համար անհրաժեշտ
դադարը:

Բ) 1. Շեշտ, 2. ըացազանչական կամ յերկար, 3. հար-
ցական,—այս յերեքը առոգանության նշաններ են կոչվում,
վորոնցով արտահայտվում է խոսողի ձայնի առոգանու-
թյունը կամ յեղանակավորումը:

Գ) 1. Չակերտներ, 2. փակագծեր, 3. կախման կե-
տեր կամ յերեք կետ, 4. ըազմակետ, 5. անջատման գիծ,
6. միության գիծ, 7. տողադարձի նշան,—այս յոթը բացա-
հայտության նշաններ են կոչվում, վորոնք զրկածքի միտ-
քը զլիսալորապես տեսողությամբ են պարզում, բացա-
հայտում:





ԳԻՒՆԸ 35 ԿՈՊ.

1927թ.

11

24190